



2020–ի Նոր Կորոնավիրուսը.

Փաստացի տեղեկություններ առողջապահության ոլորտի աշխատողների համար

Նոր կորոնավիրուսը՝ COVID-19-ը, ճանաչվել է՝ որպես թոքաբորբի մի խումբ ծանր դեպքերի պատճառ, որը սկիզբ է առել 2019 թ. դեկտեմբերին՝ Չինաստանի Հուբեյ նահանգի Ուհան քաղաքում:

Մի քանի շաբաթվա ընթացքում հարյուրավոր դեպքեր են հաստատվել, և Ուհանում հազարավոր անձինք հսկողության տակ են: Մինչ այժմ լրացուցիչ դեպքեր են հայտնաբերվել Ուհան քաղաքից դուրս՝ Ճապոնիայում, Հարավային Կորեայում, Թայլանդում և Միացյալ Նահանգներում:

2020 թ. հունվարի 21-ին Չինաստանը հայտարարեց, որ բուժաշխատողներ են վարակվել. վերջին հաշվարկներով՝ առնվազն տասնչորս հոգի:

COVID-19-ի մասին

Թեև մի քանի շաբաթվա ընթացքում շատ բան է իմացվել COVID-19-ի մասին, այնուամենայնիվ, դեռ շատ բան կա, որ հայտնի չէ:

Ի՞նչ է հայտնի: Դա կորոնավիրուս է, որը վիրուսների մի մեծ ընտանիք է, որը կարող է վարակել կենդանիներին և (կամ) մարդկանց: COVID-19-ը նման է ծանր սուր շնչառական համախտանիշ և Մերձավոր Արևելքի շնչառական համախտանիշ առաջացնող վիրուսներին:

ԱՆՏԱՆԻՇՆԵՐ

Ի՞նչ է հայտնի: COVID-19-ի ախտանիշները ներառում են ջերմություն և (կամ) ստորին շնչառական ուղիների հիվանդության ախտանիշներ, ինչպիսիք են՝ հազը կամ շնչառական դժվարությունը:

Ի՞նչ է անհայտ: Որոշ վիրուսների դեպքում վարակիչ ժամանակահատվածը նախորդում է ախտանիշներին, իսկ այլ վիրուսների դեպքում՝ այն համընկնում է ախտանիշների հետ: COVID-19-ի պարագայում մենք այդ մասին դեռ չգիտենք:



ՓՈՒՆԱՆՑՈՒՄ

Ի՞նչ է հայտնի: Մարդուց մարդ փոխանցումը հաստատված է:

Ի՞նչ է անհայտ: Արդյո՞ք հիվանդությունը փոխանցվում է շփման, թե՞ օդակաթիլային ճանապարհով: Անհայտ է նաև այն, թե արդյո՞ք առանց ախտանիշների տեղի ունեցող դեպքերը վարակիչ են, թե՞ ոչ:

CDC- ն խորհուրդ է տալիս, որ բուժաշխատողները հիվանդներին զննեն՝ կորոնավիրուսի վարակի համար: **Եթե հիվանդն ունի՝**

- Ջերմություն և ստորին շնչառական ուղիների հիվանդության ախտանիշներ, Ուհանից ճանապարհորդության դեպք կամ 14 օրվա ընթացքում վերահսկողության տակ գտնվող անձի հետ սերտ շփում
- Ջերմություն կամ ստորին շնչառական ուղիների հիվանդության ախտանիշներ և 14 օրվա ընթացքում կորոնավիրուսով հաստատված հիվանդի հետ շփում

Խնամք մատակարարողները պետք է այդ մասին անհապաղ տեղեկացնեն հիվանդանոցի ինֆեկցիոն վերահսկման բաժնին և տեղական / նահանգային առողջապահության վարչությանը:

CDC- ն կօգնի հանրային առողջության վարչություններին ապահով կերպով հավաքել, պահպանել և առաքել նմուշները: Ներկայումս ախտորոշման ստուգումը կարող է իրականացվել միայն CDC-ում: Տեղական լաբորատորիաները չպետք է փորձեն ստուգել այն:

* Հնարավոր է, որ որոշ հիվանդների մոտ ջերմություն չլինի, օրինակ՝ շատ երիտասարդների, տարեցների, ճնշված իմունային համակարգ ունեցող անձանց կամ ջերմությունը նվազեցնող դեղամիջոցներ ընդունողների շրջանում: Այս դեպքերում կլինիկական դատողությունը պետք է օգտագործվի՝ ստուգումն ուղղորդելու համար:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մենք դեռ հստակ չգիտենք, թե ինչպես է փոխանցվում վիրուսը, բայց CDC-ն առաջարկում է վարակի վերահսկում և անձնական պաշտպանիչ միջոցներ՝ օդակաթիլային և կոնտակտային փոխանցման դեպքում: Մեծ և փոքր վարակիչ նյութը կարող է ներթափանցել կամ ներծծվել լորձաթաղանթների միջոցով:

Կորոնավիրուսով կասկածվող հիվանդներին անմիջապես պետք է տալ վիրաբուժական դիմակ և մեկուսացնել, ցանկալի է՝ բացասական ճնշման ապահովման սենյակում:



Կասկածելի կամ հաստատված կորոնավիրուսով հիվանդների հետ աշխատող անձնակազմը պետք է օգտագործի ստանդարտ նախազգուշական միջոցներ, կոնտակտային և օդային կանխարգելիչ միջոցներ՝ N95 կամ ավելի ուժեղ ռեսպիրատոր, նիտրիլային ձեռնոցներ, բժշկական համազգեստ և դիմակ՝ աչքերը, քիթը և բերանը պաշտպանելու համար: Ձեռքերը լվանալու ընթացակարգը շատ կարևոր է՝ վարակի տարածումը կանխելու նպատակով:

Աշխատողները պետք է ունենան բժշկի պաշտոնական թույլտվությունը և ստուգեն ռեսպիրատորների մեկուսիչ հատկությունները, եթե օգտագործում են դեմքն ամբողջովին ծածկող ռեսպիրատորներ (օրինակ, NIOSH-ի կողմից հաստատված մեկանգամյա օգտագործման N95-ը), և վերապատրաստված լինեն՝ ռեսպիրատորների պատշաճ օգտագործման, անվտանգ հեռացման և դրանց վերացման, ինչպես նաև՝ ռեսպիրատորի օգտագործման բժշկական հակացուցումների մասին: Աշխատողները պետք է անձնական պաշտպանական միջոցները հագնելու և հանելու վերաբերյալ վերհիշելու դասընթացներ անցնեն: Շնչառական սարքերի վերաբերյալ մասնագիտական անվտանգության և առողջապահության վերահսկման կանոնը Ձեզ իրավունք է տալիս պահանջել վերապատրաստման դասընթաց և ռեսպիրատորների մեկուսիչ հատկությունների ստուգում:

Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՆ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԸ՝ ՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- Տրամադրել թրեյնինգ և ուսուցում՝ վիրուսի և դրա հնարավոր դեպքերը ճանաչելու մասին: Իրականացնել սկրինինգային ընթացակարգեր՝ ախտանիշներ և ճանապարհորդության պատմություն կամ վարակի ազդեցությանը ենթակա լինելու պատմություն ունեցող հիվանդներին անհապաղ նույնականացնելու համար, ինչը նշանակում է, որ հիվանդը կարող է ունենալ COVID-19 վարակ:
- Ապահովել COVID-19-ի հավանական կամ կասկածելի դեպքերով հիվանդների անհապաղ մեկուսացումը: Այս հիվանդները պետք է հնարավորության դեպքում տեղափոխվեն օդային վարակի մեկուսացման սենյակներ, մինչև COVID-19-ը բացառվի կամ հիվանդը ապաքինվի:
- Օդային վարակների մեկուսացման սենյակները պահել այնպես, որ նրանք ապահովեն անձնակազմի և հիվանդների պաշտպանությունը (օր.՝ ապահովել սենյակներում բացասական ճնշում, ապահովել, որ դուռը միշտ փակ լինի):
- COVID-19 վարակի հնարավոր հիվանդներին խնամք ցուցաբերող բուժաշխատողներին տրամադրել անհատական պաշտպանիչ սարքավորումներ (PPE): Այն պետք է ներառի N95 ռեսպիրատորներ, ինչպես նաև՝ աչքերը ծածկող կամ օդը մաքրող ռեսպիրատորներ (PAPRS), ձեռնոցներ, բժշկական համազգեստ և այլ անհատական պաշտպանիչ միջոցներ՝ կաթիլային և աերոզոլային նախազգուշական միջոցների համար:
- Ապահովել բավարար անձնակազմ՝ հիվանդներին ապահով կերպով խնամելու համար:

ԱՌՎԵԼ ԱՐԴԻՎՎԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Իրավիճակն արագորեն է զարգանում: Խնդրում ենք ծանոթանալ ստորև նշված հղումներին՝ ամենաթարմ տեղեկատվության համար:

- Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) իրավիճակի վերաբերյալ զեկույցները՝
<https://www.who.int/emergencies/diseases/novel-coronavirus-2019/situation-reports>
- Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ԱՄՆ կենտրոնները (CDC)՝ նոր կորոնավիրուսի մասին՝
<https://www.cdc.gov/coronavirus/2019-nCoV/summary.html>
- Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ԱՄՆ կենտրոնների (CDC) առողջապահության ոլորտի աշխատողների ժամանակավոր ուղեցույցը՝
<https://www.cdc.gov/coronavirus/2019-nCoV/hcp/clinical-criteria.html>
- Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման եվրոպական կենտրոնի COVID-19 դեպքերի աշխարհագրական բաշխումը՝
<https://www.ecdc.europa.eu/en/geographical-distribution-2019-ncov-cases>



Որպես առողջապահության աշխատողների միություն՝ մենք հարգում և խնամում ենք բոլոր ազգությունների և էթնիկ խմբերի մարդկանց և գիտակցում ենք, որ կորոնավիրուսի հետազոտությունը պետք է հիմնված լինի անհատի՝ վիրուսի ունեցած հավանականության վրա, ոչ թե՝ նրանց լեզվի կամ մաշկի գույնի հիման վրա: Այս դժվարին ժամանակահատվածում մենք կաջակցենք և կխրախուսենք բոլոր հիվանդների և թիմի անդամների հանդեպ հարգալից վերաբերմունքը: SEIU-ն կշարունակի վերահսկել վիրուսի բռնկումը և լրացուցիչ նյութեր կտրամադրի, որոնք կօգնեն անդամներին պաշտպանել իրենց և իրենց համայնքները: